

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2005թ. հունվար-մայիսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2005թ. հունվար-մայիսին կազմել է 499090.8 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 108.5%` 2004թ. հունվար-մայիսի 108.9% համապատասխան ցուցանիշի դիմաց:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. հունվար-մայիսին կազմել է 155190 դրամ, կամ 333.3 ԱՄՆ դոլար:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	Հունվար-մայիս					
	2004	2005	2004	2005	2004	2005
Ընդամենը, բազային ճյուղեր	107.7	107.3	5.3	4.8	66.6	67.1
այդ թվում`						
արդյունաբերություն	103.7	103.7	1.1	1.0	26.9	27.1
գյուղատնտեսություն	106.5	102.8	0.8	0.3	12.3	11.4
շինարարություն	116.0	126.1	1.4	2.3	9.0	11.5
տրանսպորտ և կապ	113.3	110.4	0.7	0.6	5.5	4.9
առևտուր և հանրային սնունդ	110.2	104.5	1.3	0.6	12.9	12.2
Ընդամենը, այլ ճյուղեր	117.9	111.7	3.2	2.4	20.3	19.5
ՀՆԱ-ն հիմնական գներով	109.8	108.3	8.5	7.2	86.9	86.6
Ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	103.2	110.0	0.4	1.3	13.1	13.4
ՀՆԱ-ն շուկայական գներով	108.9	108.5	8.9	8.5	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

	Հունվար-մայիս	
	2004	2005
Համախառն ներքին արդյունք	100	100
ապրանքներ	48.4	50.2
ծառայություններ	38.5	36.4
ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	13.1	13.4